ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№_____ «_____» _____ 2022 թ.

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2022 թվականի հունվարի 19-ի հ.181-Ա որոշման 8-րդ հավելվածը (աղյուսակ 1), ինչպես նաև հաշվի առնելով «ՀՀ հաշմանդամային սպորտի ֆեդերացիա» ՀԿ-ի նախագահի 21.04.2022թ. հ.22 գրությունը.

1.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետին՝ Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեով Երևանի քաղաքապետարանի (առանց Երևանի վարչական շրջանների) մասով բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 04 բաժնի 09 խմբի 01 դասի «04. Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին» ծրագրով և տնտեսագիտական դասակարգման «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» հոդվածով նախատեսված գումարներից «ՀՀ հաշմանդամային սպորտի ֆեդերացիա» ՀԿ-ին հատկացնել 1911,6 (մեկ միլիոն ինը հարյուր տասնմեկ հազար վեց հարյուր) հազար դրամ՝ ս/թ մայիսի 7-ից 14-ը Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում կայանալիք՝ Եվրոպայի հաշմանդամային Բազկամարտի առաջնությանը ֆեդերացիայի 2 մարզիկների մասնակցությունն ապահովելու նպատակով:

2.Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի վրա:

3.Կարգադրության կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լ. Հովհաննիսյանի վրա:

5/4/2022

X

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Signed by: SARGSYAN HRACHYA 2302850092 **ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ**